

Յիշատակարան. «ազնիւ գրեանս վարդապետականս ի թագաւորական խազմայէ ի դուրս ելած, մանաւանդ Սըսու եւ Քաֆայու»:

Անդրազոյն նմանութիւններ մտքի եւ ոճի կը թողում ընթերցողներուս անձամբ վերհանել վիպասանութեան եւ Սիմէոնի Ուղեգրութեան եւ Յիշատակարաններու մէջ:

10. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻ ՄԵԿԵՈՒԹԵԱՆ
ՎԱՐԳՆԱՅ (1636)

Սիմէոն դպիր մէկն է այն երեք գրիչներէն, որոնք օրինակած են 1636ին ի Լոյվ վարդանայ Մեկնութիւնն Արարածոց, որ պահուած է այժմ Էջմիածնի Զեռագրատան մէջ եւ կը կրէ 1004 համարը: Զեռագրիս մէջ գետեղած է Սիմէոն դպիր ընդարձակ Յիշատակարան մը, ուր համառօտիւ պատմելէ ետքը 1634—1635 տարիներու քաղաքական դէպքերը՝ Լեհաց Զիկիսմունդ եւ Վլատիսլաւ թագաւորներու յաղթական պատերազմները ընդդէմ Շուէտներու եւ Ապագա փաշայի, Մուրատ սուլտանի արշաւանքն Երեւանի վրայ եւ Կ. Պոլսոյ Սուրկունը, որոնց մասին նաեւ Ուղեգրութեան վերջը յիշատակութիւն ըրած էր համառօտիւ. առանձին բաժնով կը խօսի նաեւ Լեհահայոց ներքին խնդիրներու՝ Նիկողայոս արքեպիսկոպոսի յարուցած հալածանքներու եւ անոր անուղղայ ընթացքի վրայ: Նկարագրութիւնը, զոր կուտայ հոս Սիմէոն, շարունակութիւնն է վիպասանութեան, մա-